

Իմ հոգին այսօր էլ չի մանրանում,
 Ձի մսխում իրեն թովումն խօսով-
 Այդպես ցողունն է հանդում ծանրանում,
 Երբ լցում է ձոյ, իմաստուն հասկով:
 Ես այն չեմ հիմա... յոյգերիս քամին,
 Որ էջում էր ինձ անկումից անկում-
 Հանգստացել ու նստել է հիմա
 Եւ ամէն կանչի չի արձագանքում.
 Էլ չի հռնդում սիրտս վայրենի,
 Ինչպէս դաշտերում նժոյգ սանձարձակ-
 Գոռեց ինձ սիրով մի ձեռք հայրենի,
 Եւ ես մի գիշեր իմաստուն դարձայ⁹:

Ամփոփելով Չարենցի մասին իր վեր-
 լուծական խօսքը՝ Օշականը եզրակացնում
 է, որ Չարենցը բանաստեղծի խառնուած-
 քով, երաժշտական բնազդով, զգայնու-
 թեամբ ու երեւակայութեամբ օժտուած Հե-
 ղինակ է, որ իրաւամբ առանձնանում է ա-
 րեւելահայ բանաստեղծների շարքում.
 «...Անիկա գրեթէ նախնական բարբառ մը
 կ'ազատագրէ իր միամիտ վախերէն՝ տանե-
 լով իր ետեւէն արտայայտութեան ձեւե-
 րու, որոնք լեզու մը գրական կ'ընեն մէկ
 անգամէն: Անոր վրայէն է որ կրնան իրա-

րու ձեռք երկարել երկու բանաստեղծու-
 թիւնները մեր նոր գրականութեան»¹⁰:

Վերոյիշեալ տողերը վկայում են այն
 բարձր գնահատականի մասին, որին ար-
 ժանացել է բանաստեղծ Եղիշէ Չարենցը
 քննադատ Օշականի կողմից: Քանի որ
 չունենք ոչ մի կոնկրետ փաստ, Չարենցի
 կողմից ասուած կամ գրուած որեւէ ակ-
 նարկ այն մասին, որ նա ծանօթացել է
 քննադատ Օշականի վերը նշուած յօդուած-
 ծին, չենք կարող պնդել, բայց կարող ենք
 ենթադրել, որ բանաստեղծի ստեղծագոր-
 ծական կեանքում տեղի ունեցած շրջա-
 դարձային փոփոխութիւնների մէջ որոշա-
 կի դեր կարող էր խաղալ քննադատ Օշա-
 կանի կարծիքը: Ամէն դէպքում յիշեալ յօ-
 դուածի քննութիւնը բացայայտում է Չա-
 րենցի եւ Օշականի միջեւ եղած ներքին
 հոգեւոր կապը:

Ինչպէս տեսնում ենք, քննադատ Օշա-
 կանն ամենեւին էլ աչառու վերաբերմունք
 չի ցուցաբերել արեւելահայ գրականու-
 թեան հանդէպ, մնացել է հաւատարիմ իր
 սկզբունքներին եւ գործը քննելիս նշել թէ՛
 դրական, թէ՛ բացասական կողմերը:

9 Նոյն տեղում, էջ 17-18:

10 Յ. Օշական, նշ. աշխ., էջ 301:

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ԳՐՔԵՐՈՒՄ

Փառանծեմ Սեյթիխանեան

Աստուածաշնչի¹, մասնաւորապէս՝ Հին
 Կտակարանի գրաբար եւ արեւելահայերէն

1 Աստուածաշնչեան անունների քննութեան հա-
 մար մեր հիմնական նպատակն է եղել ուսումնա-
 սիրել երեք հայերէն թարգմանութիւններ. մախ՝
 Աստուածաշնչի գրաբար այն օրինակը, որը
 1997 թ. հրատարակուել է Երեսնամե 1895 թ.
 Կոստանդնուպոլսում տպագրուած եւ 1929 թ.
 Վիեննայում վերահրատարակուած գրքի հիման
 վրայ՝ Աստուածաշունչ մատեան Հիմ եւ Նոր
 Կտակարանաց: Պայմանականօրէն այս օրինա-
 կը անուանել ենք Ա.-1: Այս օրինակը համեմատել
 ենք Յ. Զօհրապեանի հրատարակած Աստուա-
 ծաշնչի հետ (տե՛ս Աստուածաշունչ մատեան
 Հիմ եւ Նոր Կտակարանաց... Յաշխատասիրու-
 թեան տեսան Յոհաննու Զօհրապեան վարդա-
 պետի, Վենետիկ, 1805:

Ա.-2 օրինակը արեւմտահայերէն հրատարակու-
 թիւն է՝ Աստուածաշունչ գիրք Հիմ եւ Նոր կտա-
 կարանաց երրայակն եւ յունական բնագիրնե-
 րէն թարգմանուած (1890 թ., Կոստանդնուպո-
 լիս): Ա.-3-ը Աստուածաշնչի 1994 թ. արեւելահա-
 յերէն մոր թարգմանութեան վերահրատարակու-
 թիւնն է՝ Աստուածաշունչ մատեան Հիմ եւ Նոր
 կտակարանների, արեւելահայերէն մոր թարգ-
 մանութիւն, Ս. Էջմիածին-Երեսնամ, 1999 թ.: Քա-
 մի որ Միսիթար Սեքաստացու հրատարակած
 Աստուածաշունչը (1733 թ.) Ոսկան Երեսնացու
 հրատարակած տպագիր առաջին Աստուածա-
 շնչի (1666 թ.) տարբերակն է՝ որոշ խմբագրա-
 կան ու սրբագրական շտկումներով, ուստի հարկ
 եղած դէպքերում անդրադարձել ենք մաւր դրան՝
 այն տալով ՄՄԱ համաոտագրութեամբ: Հայե-
 րէն տեքստերի՝ մեզ հետաքրքրող անունները
 համեմատել ենք այլալեզու Աստուածաշունչ գր-
 քերում առկայ նոյն անունների հետ՝ հայերէն
 թարգմանութեան հետ ուղղակի աղերսներ ունե-
 ցող տարբերակը կամ տարբերակները ճշտելու,
 ուստի կարեւորել ենք՝

1. յունարէն տեքստը՝ 1. Η ΠΑΛΑΙΑ ΔΙΑΘΗΚΗ
 ΚΑΤΑ ΤΟΥΣ Ο΄ Septuaginta, Id est Vetus Testa-
 mentum graece iuxta LXX interpretes edidit Alfred
 Rahlf's, Duo volumina in uno, Deutsche Bibel-
 gesellschaft, Stuttgart 1979 (Եօթանասնից):

Թարգմանութիւններում (Ա.-1, Ա.-3) եբրա-
 յական բազմաթիւ անուններ տրուած են
 Թարգմանուած: Արեւմտահայերէն բնա-
 գրում(Ա.-2) դրանք հազուադէպ են հան-
 դիպում. տրուում են տուեալ անունների
 եբրայական ձեւերը: Յատկապէս Հնգամա-
 տեանում մեզ հանդիպում են բազմաթիւ
 տեղանուններ, որոնք Թարգմանուած են:
 Թուարկենք դրանց մի մասը՝ Արմաւեանի-
 րի քաղաք (Երիքոյ), Արեգ քաղաք (Օն, Հե-
 լիոպոլիս), Անդորրութիւն (Ռորովթ), Գերեզ-
 ման քաղաք (Համոնա), Քաջաց քաղաք (Գե-
 սեմ), Աշտարակ հօտի, Արեգ աղբիւր (Բեթ-
 սամիուս), Ագարակ/գիւղ արեան (Ակեղդա-
 մա), Բանակս, Բեւեկնի ձոր (Էլ Փառան),
 Բլուր Աստու, Դաշտ մեծ, Դաշտք մայրեաց,
 Դաւանութիւն (Մեռա), Դատաստանի աղբիւր,
 Դուռ Անկեան, Դուռ ձորի, Անտառ ազգաց (Ա-
 ըրիսթ), Թշնամութիւն (Սիդնա), Լալօնք/Ան-
 տառ լալոնից (Քոքիմ), Խորանք (Սոկքովթ),
 Խրան (Մելօն), Խրամատից (Բասաղփա-
 րաին), Ծնօտ (Լեքի), Կոտորած ծնօտի, Ծով
 աղի, Ծով արաբացուց, Ծով արեւելից, Ծով ա-
 ռաջիմ, Ծով աղտից, Ծով ասփալտի/կուպրի
 կամ մալթի, Ծով մեծ, Կաղնի բարձր, Կաղնի
 սգոյ, Հանգրուան (Եպիրովթ), Հեղեղատ ա-
 րեւմտից, Հովիտք (Ելա), Հովիտ աղտից (Գա-

2. ասորերէն տեքստը. տրում է ըստ Biblia Sacra
 Juxta versionem Simplicem Quae dicitur PSCHITTA
 Beryti Typis typographae catholicae, Mosul, 1959
 (Պեշիթթա): Ասորերէն տարբերակների համե-
 մատութեան համար մեր խորհրդատուն եւ օգնա-
 կանը եղել է Հայաստանում Արեւելքի Ասորա-
 կան Ընդհանրական Սուրբ Առաքելական եկե-
 ղեցու քահանայ Տէր Նիկողոսիմ կաշիշա Յովսա-
նաւը:

3. լատիներէն տեքստը. համեմատութիւնը՝ ըստ
 Biblia Sacra Luxta Vulgatam versionem Stuttgart,
 1994 (Վոլվգատա):

բելէեմ), Հովիտ թագաւորաց (Շաւէ), Հսկաների հովիտ (Ռափայնոց), Հովիտ Տիտանաց, Ձիթեմեաց լեռ, Ողկոյզի ձոր (Եսքոզ), Վիճակաց ձոր (Ռափայնոց), Ձոր կոտորածի, Ձոր դատաստանի, Ծամբար այլազգաց, Երդման ջրհոր (Բերսաբէէ), Վեմ մեծ, Տափարակ, Նամակաց աղբիւր (Ենգանիմ), Նամակաց քաղաք (Կարիաթ Սեփեր), Ջրբոխ աղբիւր, Ջանիթափ (Եթլոն), Լեռ (Հոփր), Փորձութիւն (Մասսա), Բամբասանք (Մերիպա) եւ այլն:

Փորձենք ուսումնասիրել եւ գտնել Հայերէն տեքստերում այս անունների տարբերակային ձեւերը՝ համեմատելով երբայերէն, յունարէն, ասորերէն, լատիներէն, տեքստերում (երբեմն՝ գերմաներէնում) տրուած ձեւերի հետ: Մեզ համար կարեւոր է պարզել՝ յատուկ անունը թարգմանուած տալը յունարէն կամ ասորերէն բնագրերից են ընդօրինակել Հայ թարգմանիչները, թէ՞ դա եղել է մեր թարգմանիչների նախաձեռնութիւնը, եւ ո՞րն է եղել նման մօտեցման պատճառը: Ահա այս պատճառով էլ լատիներէն Վուլգատայի եւ գերմաներէն Աստուածաշնչի հետ զուգահրական քննութիւնը սոսկ ճշգրտման նպատակ է հետապնդում:

Մեր յօդուածներից մէկում² արդէն խօսել ենք այն մասին, որ Հին Կտակարանը յագեցած է յատուկ անունների բառարանային-բացատրական մեկնութիւններով, ինչպէս՝

Դան - ԾԱՆՊ. Լ 7. «Եւ Ռաբէլլա ասեց. Աստուած ինձ դատաստան արաւ եւ իմ ձայնն էլ լսեց, եւ ինձ որդի տուաւ, Աորա համար Աորա անունը Դան (դատաստան) դրաւ»:

Եւ այս բացատրութիւն-մեկնութիւնը դառնում է յատուկ անունների ստեղծման կարեւոր հիմքերից մէկը: Տրուած է անունը, որը բառացի իմաստ է պարունակում, այդ իմաստը տրուած, բացատրուած է եր-

2 Փ. Գ. Մէլթիսանեան, Հին Կտակարանն իբրեւ յատուկ անունների առաջացման սկզբնաղբիւր. Լրաբեր հաս. գիտ., 2003, թիւ 3, էջ 62-72:

րայերէն բնագրում: Թարգմանիչը հարազատօրէն ներկայացնում է իր թարգմանութեան մէջ ե՛լ անունը, ե՛լ անուան մեկնութիւնը, այսինքն՝ չի ազաւաղում բնագիրը: Ընդ որում, նա, երբայերէնին քաջատեղեակ լինելով, կարող է կա՛մ անունը միայն տալ՝ գիտակցելով, որ դա յատուկ անուն է եւ չկարեւորելով անուան հիմք-մեկնութիւնը, կա՛մ տալ թէ՛ անունը, թէ՛ այդ անուան մեկնութիւնը: Հարցը աւելի է բարդանում տեղանունների դէպքում, քանի որ այս պարագայում երբայական ձեւը իսպառ վերանում է եւ տրուում է լաւագոյն դէպքում տեղանուան թարգմանուած տարբերակը, իսկ յաճախ էլ յատուկ անունն, իսպառ վերացած լինելով, տրուում է որպէս հասարակ անուն: Կարծում ենք՝ նաեւ այս մօտեցումն է երբայական բնագրի ազաւաղման պատճառը: Այսինքն՝ ոչ միայն երբայերէն, այլեւ յունարէն եւ ասորերէն տարբեր տեքստերում մի դէպքում տրուել են միայն յատուկ անունները, միւս դէպքում՝ ե՛լ անունը, ե՛լ մեկնութիւնը միաժամանակ, կամ էլ միայն մեկնութիւնը, այն էլ՝ յաւելումներով ու սրբագրումներով՝ կախուած թարգմանիչ լեզուական իմացութիւնից³: Եթէ սրան աւելացնենք նաեւ այն առանձնայատկութիւնը, որ Հին երբայերէնը չունէր մեծատառեր, եւ Հին Կտակարանի երբայերէն բնագրի յատուկ անունները թարգմանիչ

3 Յանէ վարդապետ Անանեանը իր «Անձնատրուած իմաստութեան գաղափարի առաջացումն ու զարգացումն ըստ Առակաց գրքի Ա-Թ-ի» աշխատութիւնում նշում է, որ երբայական բնագրի եւ Եօթանասնիցի տարբերութիւններն Առակաց գրքի պարագայում ոչ միայն լեզուական, քերականական են, այլ նաեւ՝ կառուցութեամբային, եւ բերում է մի օրինակ, ըստ որի՝ «Առ. Լ 1-ում եւ ԼԱ 1, 4-ում առկայ յատուկ անունները (ընդհանուր հաշուով եօթ՝ Ագուր, Լեմուէլ (2 անգամ), Եաբէ, Իթթիէլ (2 անգամ), եւ Ուքքալ) Եօթանասնից թարգմանչի գրչի տակ անհետացել են» (տե՛ս Յանէ վ. Անանեան, Անձնատրուած իմաստութեան գաղափարի առաջացումն ու զարգացումն ըստ Առակաց գրքի Ա-Թ-ի, Ս. Էջմիածին, 2014):

համար շատ յաճախ ընկալելի չէին որպէս այդպիսիք, ապա պարզ կարող է դառնալ հէնց միայն յատուկ անուններում այսքան տարբերութեցումներն ու ազաւաղումները:

Այսպէս՝ ԾԱՆՊոցի ԻԲ գլխում, երբ Աբրահամը որդուն զոհաբերելու համար Աստուծո շնորհին է արժանանում, այդ վայրն անուանում է Եփրայիմ: Ա-2-ը այդ անունը տալիս է. «Եւ Աբրահամ ան տեղի անունը Եփրայիմ կոչեց, որ մինչեւ այսօր կ'ըսուի, Տէրը լեռան մէջ պիտի երեւնայ» (ԾՆ. ԻԲ 14-15): Մինչդեռ Ա-1 եւ Ա-3 գրքերում տեղանունը բառացի թարգմանուած է. «Եւ կոչեաց զԱբրահամ զանուն տեղոյն այնորիկ Տէր ետեւ. զի ասիցեն ցայսօր», «Աբրահամն այդ վայրի անունը դրեց «Տէրը տեսաւ», եւ մինչեւ այսօր էլ ասում են՝ «այդ լեռան վրայ երեւաց Տէրը»: Թարգմանուած տարբերակը գալիս է ե՛լ յունարէնից՝ Κυριος ει δειν, ե՛լ ասորերէնից, քանի որ Պեշիթայում տրուում է թարգմանաբար՝ Տէրը կը տեսնի կամ կ'երեւայ: Լատիներէնում դարձեալ տրուած է թարգմանաբար՝ Dominus videt, Dominus videbit: Ի դէպ, զբարբար եւ արեւելահայերէն գրքերը հետեւողականօրէն Եփրայ անուամբ բաղադրուած տեղանունները, որպէս կանոն, տալիս են թարգմանաբար, ինչպէս՝ Եփրայիմի՝ Տէրը իմ դրօշակն է, Եփրայիմի՝ Տէրը իսրայէլիս է, Եփրայիմի՝ Տէրն այնտեղ է, Յովաբիբի՝ ում պաշտպանում է Եփրայիմ, Եփրայիմի՝ Եփրայի պարգեւ, շնորհ եւ այլն, կամ անուններն ազաւաղում են, ինչի հետեւանքով բուն անուան հետ նմանութիւնը յաճախ կորչում է, այսպէս՝ Յովաբիբի՝ Յարիբ, Եփրայիմի՝ Եփրայիմի:

Գ. Գասպարեանը «Հայ բառարանագրութեան պատմութեան» մէջ⁴ գրում է. «Հրէական մօտ անուններն իմաստատրուած էին, Արամք երբ գործ էին ածում Ակեղդամա, հասկանում էին արեւան գիւղ, եւ կապում Քրիստոսի արեւան գնով (Յուդայի ստացած 30 ար-

4 Տե՛ս Գ. Գասպարեան, Հայ բառարանագրութեան պատմութիւն, Երեւան, 1968, էջ 5-563:

ծաթը) ձեռք բերած գերեզմանատեղին, Սառա-իշխանուհի եւ այլն, իսկ փոխառնող լեզուներում այդ բառերը գրկուած էին իմաստատրումից» (ընդգծումը մերն է – Փ. Մ.) (էջ 26): Մենք այս հարցում համամիտ չենք հեղինակի վերջին մտքին եւ ուզում ենք ընդգծել յատկապէս այն հանգամանքը, որ անունները թարգմանելու միտումը խօսում է հէնց այն մասին, որ զբարբար բնագիրը շատ հին է, այսինքն՝ թարգմանական աւանդոյթ չի եղել. եղել է սոսկ Սուրբ Գրքի անաղարտ պարզ վերարտադրում մէկ այլ լեզուով (որքան բնագրին հարազատ, այնքան ճիշտ): Ահա այդ պատճառով էլ յաճախ նկատուած է յատուկ անունները թարգմանելու միտում: Իսկ թարգմանաբար տրուել են յատկապէս տեղանունները: Միակ բացառութիւնը Եւա անձնանունն է, ուստի նախ խօսենք այդ անուան մասին:

Թարգմանիչները զբարբար տեքստում տուել են Եւա անուան բառացի նշանակութիւնը. «Եւ կոչեաց Ադամ զանուն կնոջ իւրոյ Կեանա (նոյն ձեւով՝ թարգմանաբար տրուած է յունարէնում՝ Ζωη, որ է կեանք), զի նա է մայր ամեանայն կեանապէս»: Այդ նոյն ձեւով է տրուում արեւելահայ տարբերակում, մինչդեռ արեւմտահայերէնում պահպանուած է երբայական Եւա տարբերակը (ասոր.՝ Խաւա, լատ.՝ Hava): Չարմանալին այն է, որ Աստուածաշնչի եւ ոչ մի լեզուով (բացի յունարէնից) թարգմանութիւն՝ արամերէն, ասորերէն, ռուսերէն եւ գերմաներէն, Եւա անունը չի տուել թարգմանաբար՝ ըստ իր կեանք նշանակութեան: Սա, ինչ խօսք, ցոյց է տալիս, որ Հայ թարգմանիչները հետեւել են Եօթանասնից բնագրին, սակայն դա չի նշանակում, որ բոլոր անունների դէպքում ենք հետեւել յունարէնին⁵:

5 Մենք հակում ենք կարծելու, որ մինչեւ այժմ անյայտ է հայերէն առաջին թարգմանութեան նախափուք օրինակը կամ օրինակները, եւ չենք կարող վստահաբար ասել, թէ այդ թարգմանում տարբերակները ինչի հետեւանք են՝ հայ

Հին Կտակարանում առկայ առաջին տեղանունը Եդեմ (Edem) է, որը գրաբար բնագրի Ծննդոց գրքի Բ գլխում արդեն տրևում է Եդեմ անունան բառացի նշանակութեամբ՝ փափկություն իմաստով. «Եւ առ Տէր Աստուած զմարդն զոր արար, եւ եղ զնա ի դրախտին Փափկութեան գործել զնա եւ պահել» (Ծննդ., Բ 15-16): Նոյն ձևով գործածուած է Ծննդոցի Գ 23-24-ում. «Եւ եհան արծալեաց զնա Տէր Աստուած ի դրախտէ անտի փափկութեան՝ գործել զերկիր ուտի առաւ»: Ա-2-ը նշուած գլուխներում պահուած է երբայական տարբերակը՝ Եդեմ: Ա-3 տարբերակը հետեւում է գրաբարին, բայց փափկութեան փոխարէն նշուած տեղերում դնում է բերկրութեան ձևը. «Տէր Աստուած իր ստեղծած մարդուն տեղատրեց բերկրութեան դրախտում»: Ասորական Պեշիթթան բոլոր դէպքերում տալիս է Ադեմ (Ադեմ):

Փաստորէն՝ գրաբար թարգմանութեան մէջ (Ա-1) դրուել է մէկ Եդեմ (Ծննդ., Բ 8, 10), մէկ Փափկություն (Ծննդ., Բ 15-16, Գ 23-24), արեւմտահայերէն տեքստը բոլոր դէպքերում պահել է Եդեմ (Ա-2), արեւելահայերէն թարգմանութիւնը՝ կա՛մ Եդեմ, կա՛մ Բերկրություն (Ա-3): Եբրայերէնում՝ ձո արմատը նշանակում է «ախորժելի կեանք, հաճոյք»⁶:

Ի՞նչ տարբերակներով է տրևում այս անունը յունարէն բնագրում: Եթանասանիցի Ծննդոց Բ 8-ը տալիս է Εδεμ, Բ 15-ում միայն նշուած է դրախտում παραδεισος/πα-ραδεισος/, եւ միայն Գ 23-24-ում տրևում է παραδεισους της τρυφης/τρυφη/ կապակցութիւնը, որտեղ առկայ τρυφη բառը բացատրուած է երկու նշանակութեամբ՝ վայելք կամ փափկութիւն:

թարգմանիչների սեփական մասնաձեռնութեամբ, յունարէնից ընդօրինակմամբ, թէ՛ բոլորովին այլ բնագրի կամ բնագրերի առկայութեան, որոնց մասին կամ տարբեր կարծիքներ:

6 St' u Հր. Աճառեան, Հայերէն արմատական բարարան, հտ. Բ, Երևան, 1973, էջ 4:

Վուլգատան անունը տալիս է դարձեալ թարգմանաբար՝ paradiso voluptatis, ընդ որում ոչ միայն Մն. Բ 15-16-ում, այլեւ հէնց Բ 8-ում, ապա նաեւ՝ Գ 23-ում: Ծննդոցի Դ 16-ում առաջին անգամ տրևում է Եդեմի լատիներէն՝ Eden տարբերակը: Աւելացնենք նաեւ, որ Եսայու, Եզեկիէլի մարգարեութիւններում Եդեմի փոխարէն (հայերէն տեքստերում՝ Եդեմ) լատիներէնը տալիս է փափկութեան պարտէզ:

Նշուած փաստերը մեզ համար կարեւորում են մի էական հանգամանք. Եդեմը Աստուածաշնչում յիշատակուող առաջին տեղանունն է, եւ եբրայերէն բնագրում անունան բառային նշանակութիւնը ընկալելու խնդիր չկար, իսկ յունարէնում, ասորերէնում, լատիներէնում կամ հայերէնում թարգմանչի կողմից տեղանունը թարգմանաբար է ներկայացուել: Իսկ որ թարգմանուել է, դա նշանակում է հնագոյն տարբերակի առկայութիւն, երբ մեր առաջին թարգմանիչները (հայ, յոյն, թէ ասորի) չունէին թարգմանական փորձ եւ հմտութիւն, չկար աւանդոյթ, ինչի հետեւանքով էլ բազմաթիւ յատկանուններ մեխանիկորէն թարգմանուել են՝ տարակարծութիւնների տեղիք տալով:

Ելնելով Աստուածաշնչի տեքստից՝ կարելի է այլ հետեւութիւն էլ անել: Ծննդոցի Բ 8-ում կարգում ենք. «Եւ տնկեաց Աստուած զդրախտն՝ յԵդեմ ընդ արեւելս, եւ եղ անդ զմարդն զոր ստեղծ» (Ա-1): Նոյն նախադասութիւնը կայ Ա-2-ում. «Եւ Տէր Աստուած արեւելքին կողմը Եդեմի մէջ պարտէզ տնկեց ու իր շինած մարդը հոն դրաւ»: Այնուհետեւ Բ 15-ում դարձեալ նշուած է. «...առաւ մարդը ու Եդեմի պարտէզին մէջը դրաւ»: Ա-2-ի այս ձևը՝ Եդեմ, համապատասխանում է եբրայերէնին, ուր դարձեալ տրևում է Եդեմի պարտէզ: Այսինքն՝ Եդեմն ու պարտէզը տարանջատուած են, Եդեմի մէջ Աստուած կողմից ստեղծուած է պարտէզ, որն արդէն գրաբար թարգմանութեան մէջ, ճիշտ Եթանասանիցի, Վուլգատայի պէս

տրևում է փափկութեան դրախտ թարգմանուած տարբերակով: Ըստ այդմ էլ տարբեր աղբիւրներ Եդեմ անունան իմաստը տարբեր կերպ են բացատրում: Ըստ ՆԲՀ-ի՝ Եդեմ կամ Ադիմ/Ադեմ բառերի նշանակութիւններն են փափկություն, գրգռք, զուարճություն, վայելք⁷: Եդեմը նախ եւ առաջ եղել է աշխարհագրական տեղանուն, ինչը հաստատուում է նաեւ ԲՅԱ-ով⁸ եւ գերմաներէն Աստուածաշնչի գրքերով⁹: ԲՅԱ-ն նոյնիսկ փորձում է ճշտել Եդեմի աշխարհագրական սահմանները. «Թէպէտ ոմանք ի հնումն յայլ եւ յայլ տեղիս եղին, սակայն ըստ որում ասեն եւ հաստատեն բազումք եւ մեծամեծ վարդապետք եւ ըստ որում երեւի ի սուրբ գրոց, Եդեմ ասի այն գաւառն հայոց, որ այժմ Կորդուաց աշխարհ կոչի եւ ի Տաճկաց Քիւրտիստան ասի եւ սա ի մէջ սահմանացն Արարատայ եւ Ասորեստանեայց եւ Միջագետաց առ լերամբքն Կորդուաց» (ԲՅԱ, էջ 76):

Ուստի, որպէս այդպիսին, այն չպէտք է թարգմանուէր: Արդեօք պահպանուե՞լ է այդ սկզբունքը: Աստուածաշնչի հայերէն գրքերը հաւաստում են (եւ ոչ միայն բնագրերը), որ Եդեմն աշխարհագրական տեղանունն է՝ արեւելեան կողմում կամ արեւելքում գտնուող, ուստի արեւելքը չի կարող իբրեւ նշանակութիւն ընկալուել Եդեմի համար¹⁰: Դա է հաստատում նաեւ գերմաներէն թարգմանութեան համեմատութիւնը. "Dann legte Gott im Osten, in der Landschaft Eden, einen Garten an" (Gen. 2,

7 St' u Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1-2, Երևան, 1998:
 8 Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1, 1749, հտ. 2, 1769. Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին եւ Նոր կտակարանաց (այսուհետ՝ ԲՅԱ):
 9 Gute Nachricht Bibel mit Einfuehrungen und Bildern, Sonderausgabe, fuer das Jahr mit der Bibel 1992. Die Bibel in heuetigen Deutsch (Deuterokanonische Schriften/Apokryphen) Deutsche Bibelgesellschaft, Stuttgart.
 10 Եդեմը երբեմն ստուգաբանում է նաեւ արեւելք:

8): Անշուշտ, կայ հակասութիւն Ա-3-ի թարգմանութեան հետ համեմատելիս, ըստ որի՝ Աստուած «Եդեմում՝ նրա արեւելեան կողմում», դրախտ հիմնեց: Այսինքն՝ մի դէպքում Եդեմ աշխարհագրական վայրը գտնուում է արեւելքում, միւս դէպքում Եդեմ աշխարհագրական վայրի արեւելեան հատուածում է տնկուած պարտէզը:

Աստուածաշնչի հայերէն թարգմանական երեք տեքստերում էլ՝ Ա-1, Ա-2, Ա-3, յատուկ անունները տրևում են տարբեր ձևերով: Աւելին, եբրայական բնագրում առկայ տեղանունը հայերէն տեքստում դարձել է հասարակ անուն, եւ սովորական ընթերցողը չի կարող ենթադրել, որ տուեալ հատուածում եղել է բնագրային յատուկ անուն:

Վերցնենք Զատիթաի անունը, որը համարժէքն է եբրայական Եթ/դոն/ տեղանունան: Այն գործածուած է Եզեկիէլի գրքի ԽԸ գլխի 1-ին հատուածում (յուն.՝ ΚΑΤΑΒΑΣΤΗΣ՝ զատիթաի, լատ.՝ Aethlon, ասոր.՝ խըթոն):

Գրաբար տեքստը մեզ հրամցում է զատիթաի տարբերակը փոքրատառով. «...ըստ կողման զատիթաիին, որ զատանէ ընդ մուսս Եմաթու» տողատակում նշելով եբրայական տեքստը, ուր զատիթաիի փոխարէն տրևած է Եթոն. «ստ ճանապարհան Եթոնայ յեմաթ»: Արեւելահայերէն տարբերակում եւս տրևում է զատիթաի, եւ միայն արեւմտահայերէն տարբերակում պահուած է եբրայերէն տեղանունը. «Հիսիսի ծայրէն՝ Եթոն-նի ճամբուն քովը դէպ ի Եմաթ»:

Ինչպէս նկատուած ենք, Ա-1, Ա-3 տեքստերում չի տրուել բուն եբրայական անունը, մինչդեռ բնագրից յստակ ընկալուած է անունան տեղանուն լինելը: Մասնագիտական բառարանները նշում են, որ Եթոնը Պաղեստինի Հիւսիսային քաղաքներից մէկն է: Բայց հակասութիւնն աւելի է խորանում ԲՅԱ-ի փաստարկով, ըստ որի՝ նոյն այս անունը՝ Եթոն, առկայ է նաեւ

Թուոց գրքի Լ Դ գլխի 7-8-րդ հատուածում, այս անգամ արդէն՝ Լեո տարբերակով. «...ի մեծէ ծովէն չափեսչիք ձեզ լեառն լեռնայն» (Ա-1, ՄՄԱ)՝ դարձեալ տողատակում բերելով ըստ եբրայականի՝ «...մինչեւ ցլեառնն Հովր»։ Բառացի մէջբերենք. «Ձառիթափ... Այս բառ է հայերէն, որով նշանակի գաղիվայրն։ Բայց Եզեկ. 48. 1* իմանի գաղիվայրն այն, որ էր ի սահմանի երկրին անտեսաց ընդ ճիւղիսակողմն, եւ ընդ արեւմուտս կոյս։ Եւ էր մի ի լեռնացն Լիբանանու, որպէս կարծեն ումանք, եւ նոյն, որ Թու. 34. 7 գրի՝ լեառն լեռնային. եւ կոչի այսպէս վասն կարի բարձրութեան»¹¹։ Բայց անհասկանալի է մնում է, թէ ինչու պէտք է այս անունները նոյն գլխաբառի տակ յայտնուէին, քանի որ թէեւ հայ թարգմանիչները Թուոց գրքում դրել են միայն Լեո, բայց թէ՛ տողատակից, թէ՛ արեւմտահայերէն բնագրից պարզ է դառնում, որ խօսքը Հովր լեռն մասին է (յուն.՝ το ορος՝ փոքրատառ գրութեամբ, ասոր.՝ Հոո)։ Մեծ է այս լեռան խորհուրդը Սուրբ Գրքում. Աստուծո կամքով Ահարոնը բարձրացաւ այդ լեռը եւ վախճանուեց Հէնց այդ լեռան վրայ։

Մէկ այլ հետաքրքիր օրինակ հանդիպում է Յեսուի գրքում՝ Ակնաստր/Ակնասոր (ՄՄԱ). «Եւ Կադէս եւ Եդրային, եւ Ակնաստր... քաղաքք» (Յեսու, ԺԹ 37), (Ա-2-ում՝ Են-հասոր)։ Ինչպէս նկատում ենք, բառի կէսը հայերէն է, կէսը՝ եբրայերէն, եբրայերէնում գրւում է Են Ասոր, որ թարգմանւում է աղբիր կամ ակն Աստրայ։ Սա եղել է նեփթաղիմի ցեղի քաղաքի անուն. անուան համարժէքն է Եդրայինը։ Արեւմտահայերէն տարբերակն է Են-հասոր, արեւելահայերէն՝ Ակնասոր, յունարէն՝ յոյդ (աղբիր) Ασορ, ասորերէն՝ Էն Սոռ, լատիներէն՝ Nasor, գերմաներէն՝ En-Hazor։ Ինչպէս տեսնում ենք, գրաբար տեքստը ուղղակի աղերսուած է յունարէնից։

11 Տե՛ս Բաղդիք հայկազեան լեզուի, հտ. 2, 1769. Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց Հին եւ Նոր կտակարանաց (ԲՅԱ), էջ 95:

Ծննդոց գրքի ԻԶ գլխում թարգմանաբար տրւում է ջրհորների մի քանի անուն՝ Ջրկում, Թշնամութիւն, Անդորութիւն, Երդման, որոնք դառնում են Իսահակի եւ փղշտացի հովիւների փոխարարբերութեան անուանական ղրսեւորումներ։ Բայց այս դէպքում էականն այն է, որ աստուածաշնչեան այդ անունները գրաբար, արեւելահայերէն եւ արեւմտահայերէն թարգմանութիւններում տարբեր կերպ են տրուած՝ Էսէք (ասոր.՝ Ասկա)՝ Ջրկում, Կոիւ, Անիրաութիւն, Սիդնա՝ Թշնամութիւն, Ռոբովթ՝ Ընդարձակութիւն, Անդորութիւն, Բերսաբէէ՝ Երդման ջրհոր¹²:

Ծննդոց գրքի ԻԶ 20-ում կարդում ենք. «Եւ մարտնչէին հովիւքն Գերարացոց ընդ հովիւսն Իսահակայ, եւ ասէին, թէ իրեանց իցէ ջրհորն. եւ կոչեաց զանուն ջրհորոյն Ջրկումն, քանզի գրկէին գնա»։ Ա-2 արեւմտահայերէն թարգմանութեան մէջ տրւում է եբրայական Էսէք(կ) տարբերակը, որը տողատակում բացատրւում է իբրեւ կոիւ։ Արեւելահայերէն տարբերակում այլ հիմնաւորմամբ այլ անուն է տրւում. «Նրանք ջրհորը կոչեցին Անիրաութիւն (յուն.՝ Αδι-κία)- անիրաութիւն լատիներէնում՝?, գերմաներէնում՝ Esek (Streit)), քանի որ նրա հանդէպ անիրաութիւն էին գործել»։ ԻԶ 21-ում արդէն մէկ այլ ջրհոր Իսահակն անուանում է Թշնամութիւն։ Յունարէնում տրւում է Էչթրա, որ է՝ թշնամութիւն¹³, լատիներէնում՝ Inimicitias, գերմաներէնում՝ Sitna (Zank):

Ծննդոց ԻԶ 22-ում տրւում է երրորդ ջրհորը՝ Անդորութիւն անուամբ եբրայական Ռոբովթի փոխարէն. «Չուեաց անտի եւ փոքեաց այլ ջրհոր, եւ ոչ մարտնչէին վասն այնր, եւ

12 Գրաբար, արեւելահայերէն եւ յունարէն տարբերակները տալիս են Երդման ջրհոր, իսկ արեւմտահայերէն, ռուսերէն տարբերակները՝ Բերսաբէէ։
13 Հետաքրքիր է նաեւ, որ եբրայերէնում անուան բացատրութիւնն է գործ, գրադմուք, աշխատանք։

կոչեաց զանուն նորա Անդորութիւն, ասէ. Ջի այժմ ընդարձակեաց մեզ Տէր, եւ անեցոյց զմեզ լեռկրի»։ Այս դէպքում յունարէնը տալիս է Էսթրոպրա - Ընդարձակութիւն, լատիներէնում՝ Latitudo, ասորերէնում՝ Ռախրոթ, գերմաներէնում՝ Rehobot (Weite):

Հայերէն թարգմանութիւններից միայն Ա-2-ն է անունը թողնում նոյնը՝ Ռոբովթ. «Եւ անոր անունը Ռոբովթ դրաւ՝ ըսելով. «Քանզի հիմա Տէրը մեզ ընդարձակեց...»։ Իսկ Ռոբովթը, թէ՛ ըստ ԲՅԱ-ի (էջ 193), թէ՛ ըստ օտար աղբիւրների, «ընդարձակութիւնը կամ հրապարակը՝ իմաստն ունի. այնպէս որ՝ Ա-1-ը եւ Ա-3-ը, կարծում ենք, այս դէպքում ճիշտ չեն թարգմանել անուան իմաստը, մանաւանդ որ, եբրայական բնագիրն ուղղակի յուշում եւ հիմնաւորում է անուան բացատրութիւնը, իսկ յունարէն եւ ասորերէն տեքստերի հետ համեմատութեան դէպքում հաստատուում է Ընդարձակութիւնը»։

Մէկ այլ օրինակ բերենք, որը ցոյց է տալիս գրաբար բնագրի կապը Եթիոպիայի հետ՝ ծնօտ (յուն.՝ Σιαγων, լատ.՝ Maxilla «Աղբիւրն ծնօտի») Πηγη σιαγωνος, լատ.՝ Fons maxilla, «Ծնօտի կոտորած» (τραυμα - վնասուածք տղս σιαγωνος, elevatio Maxillae):

Դատաւորաց ԺԵ 19-20-ում, Սամսոնի քաջագործութիւնների նկարագրութեան մէջ, խօսուում է մի քանի տեղանունների մասին, որոնք բոլորը կապւում են Ծնօտ անուանման հետ (անունը կապւում է էջի ծնօտի հետ, որն իր ձեռքն է վերցնում Սամսոնը եւ կոտորում թշնամիներին). «Եւ երաց Տէր զձակ Ծնօտին, եւ էլ ի մամնէ ջուր, եւ արք. եւ դարձաւ ոգի իւր առ ինքն եւ գովացաւ. վասն այնորիկ կոչեաց զանուն նորա Աղբեր աւանանեալ Ծնօտի (տողատ.՝ եբր. Այնգորէ (որ նշանակի Աղբիր կոչողին) մինչեւ ցայսօր»։ Գրաբար բնագրի այս անուանումները նոյնութեամբ կրկնում է Ա-3 բնագիրը. «Եկաւ նա Ծնօտ կոչուած վայրը», ասոր.՝ Լիսի, գերմ.՝

Lehi (14), «եւ երբ իր խօսքը վերջացրեց, ծնօտը ձեռքից օգեց եւ այդ վայրը անուանեց Ծնօտի կոտորած (17), ասոր.՝ Ծնօտի արին, «Եւ Տէրը Ծնօտ կոչուող վայրում մի անցք բացեց, նրանից ջուր դուրս եկաւ, նա խմեց, ոգի առաւ եւ գովացաւ. այդ պատճառով դրա անունը դրեց Ծնօտի աղբիր» (19):

Ա-2 արեւմտահայերէն տեքստում բերւում է Լեքի՝ «երբոր անիկա մինչեւ Լեքի եկաւ (14), «եւ ան տեղին անունը Ռամաթ լեքի կոչեց» լուսանցքում տալով դրա թարգմանական տարբերակը՝ Ծնօտի բլուր (լատ.՝ Ramathlehi, գերմ.՝ Ramat-Lehi) (17):

Լեքի անունը ԲՅԱ-ն տալիս է Ելքի գլխաբառի տակ՝ ծնօտ նշանակութեամբ, նշելով. «...ըստ այլոց գրի Լեքի»¹⁴, ինչպէս եւ տալիս է Ծնօտ անուանումը՝ յղելով Ելքի տարբերակին։ Թէեւ կայ Ռամաթ քաղաքի անունը, որը ստուգաբանւում է բարձր կամ գերաբարձ, սակայն սա արդէն չի յղւում Դատաւորաց գրքում առկայ Ռամաթ լեքի ձեւին։

Ի դէպ, ինչպէս նկատեցինք, արեւմտահայերէն տեքստն անունները գրեթէ չի թարգմանում. սա ոչ թէ պատահականութիւն է, այլ ինչպէս բազմաթիւ օրինակներն են փաստում, բնորոշ առանձնայատկութիւն է, որն էլ խօսում է այն մասին, որ Ա-2 բնագրի բնօրինակը բոլորովին այլ է եղել։ Յունարէնում տրւում է ՏՐԱԿՈՆՈՍՍ, իսկ ասորերէն տեքստում տրւում է եբրայական Էն Կառնա, ապա անմիջապէս բացատրւում է որպէս Էջի ծնօտ։

Նամակաց աղբիր (Πηγην γραμμιάτων), Նամակաց քաղաք (Πόλις γραμμιάτων)։ Յեսուի գրքի ԻԱ 29-ում Ա-1 գրաբար բնագիրը եբրայական Ենգամիմ քաղաքի անունը տալիս է թարգմանաբար՝ Աղբիրն Նամակաց (տողատ.՝ եբր. Ենգամիմ), արեւելահայերէն օրինակում՝ Նամակաց աղբիր ձեւով։ Ա-2 արեւմտահայերէն բնագիրը պահում է Ենգամիմ, ասոր.՝ Էն

14 Տե՛ս ԲՅԱ, էջ 80:

Գաղ, լատ.՝ Engannim, գերմաներէն բնագիրը դարձեալ՝ En-Gannim: Անուան Ենգանիմ ձեւը տալիս է ԲՅԱ-ն՝ Աղբիւր պարտիզաց նշանակութեամբ: Այս անունը դառնում է նաեւ քաղաքի անուն Դատաւորաց եւ Յեսուի գրքերում: «Եւ անուն Դաբիրա էր յառաջագոյն քաղաք Նամակաց» (Յես. ԺԵ 15-16, 49): Առաջին Հայեացքից կարող է թուալ, թէ այս դէպքում յաւելուել է Հայերէն տարբերակը Հայ թարգմանիչներէ կողմից, մինչդեռ կատարուել է բնագրային անուան թարգմանութիւն. Նամակացը յուշում է, որ քաղաքը ունեցել է ուսումնական նշանակութիւն: Յունարէնում տրուում է Πηγην γραμμάτων (Յես. ԻԱ 29), որը, ինչպէս եւ ասորերէնում, նշանակում է Աղբիւր գոտ: Ինչպէս նկատելի է, Նամակաց աղբիւր թարգմանութիւնը պատճէնում է յունարէն տեքստում առկայ տարբերակը:

Փորձութիւն (յուն.՝ Πειρασμος), Բամբասանք՝ (յուն.՝ Λοιδορια ասոր.՝ Նասա, Մոհիա) Հայացումած տեղանունները ուղղակիորէն կապուում են յունարէնի հետ¹⁵: Գրաբար Աստուածաշնչի Ելից գրքի ԺԵ 7-ում Մասսա, Մերիպա անունները տրուում են թարգմանաբար. «Եւ անուանեաց զանուն տեղոյն այնորիկ Փորձութիւն եւ Բամբասան (տողատ.՝ եբր. Մասսա, Մերիպա), վասն բամբասանաց որդոցն Իսրայէլի եւ վասն փորձելոյն անոց զՏէր եւ ասելոյ...»: Արեւմտահայերէնը տալիս է եբրայերէն տարբերակը. «Եւ ան տեղիւն անունը Մասսա ու Մերիպա դրաւ. ինչոյ որ Իսրայէլի որդիքը հոն վիճեցան, եւ Տէրը փորձեցին...»: Ա-3-ը Բամբասանք-ի փոխարէն գործածել է Մեղադրանք. «Նա այդ վայրը կոչեց Փորձութիւն եւ Մեղադրանք, որովհետեւ Իսրայէլացիները մեղադրել էին եւ Տիրոջը փորձել՝ ասելով. «Տէրը մեր մէջ է, թէ՞ ոչ»: Փորձութիւն-ը ճիշտ եւ յաջող թարգման-

15 Ասեմք, որ վույգատան եւս անունները տալիս է թարգմանաբար. «...et vocavit nomen Iocillius Temptatio propter jurgium filiorum Israel et quia temptaverunt Dominum...»:

նութիւն է, կարելի է ասել բառացի, իսկ ինչո՞ւ Բամբասանք կամ Մեղադրանք: Գրաբարում բամբասել նշանակում է չարախօսել, բանասրկել, ամբաստանել, մեղադրել¹⁶: Թէեւ հոմանիշային ինչ-որ կապ կայ պարսաւել եւ մեղադրել բառերի միջեւ, այդուհանդերձ ընտրութիւնն այնքան էլ յաջող չի կատարուած, եւ ո՛չ գրաբար, ո՛չ էլ արեւելահայերէն Աստուածաշնչում գրքերը անունը ճիշտ չեն ներկայացրել: Յունարէնում Համապատասխան տեղում գործածուած λαιδορια-ն արտայայտում է երեք իմաստ՝ 1. հայհոյանք, 2. անուանարկում, 3. կշտամբանք, անխափանք: Ինչպէս տեսնում ենք, այս բառի դէպքում եւս մեղադրանք կամ բամբասանք իմաստ չկայ: Թերեւս, բնագրի բովանդակութեանը առաւել Համարժէք թարգմանութիւնը պիտի լինէր Նախաստիգ տարբերակը, ինչը նաեւ Հաստատուում է ասորերէն տեքստում:

Դատնութիւն (յուն.՝ Μερα, լատ.՝ Mara): Ելից գրքի գրաբար բնագրի ԺԵ 23-ում՝ «...եկին ի Մեռա, եւ ոչ կարէին ըմպել ջուր ի Մեռայն, քանզի դառն էր. վասն այնորիկ անուանեաց զանուն տեղոյն այնորիկ Դատնութիւն» Հատուածում առկայ Մեռա-ն արեւմտահայերէնում չի թարգմանուում: Միւթար Սեբաստացին իր Հրատարակած Աստուածաշնչում (1733 թ.) տալիս է անուան թարգմանուած տարբերակը. «Վասն այնորիկ անուանեաց զանուն տեղոյն այնորիկ Դատնութիւն», սակայն ԲՅԱ-ում բերուում է Դառն աղբիւրք ձեւը՝ այն յղելով Մեռա անուանմանը եւ մեկնաբանելով անուան նշանակութիւնը որպէս դառն կամ դառնութիւն: Պեշիթթան տալիս է եբր. ձեւը՝ Մուռաք եւ մեկնաբանում՝ դառն: Ինչպէս տեսնում ենք, Հայերէնը չի կրկնում ո՛չ յունարէնին, ո՛չ ասորերէնին:

Թարգմանելու միտումը յաճախ յանգեցրել է հակասութիւնների. մի գրքում

16 Ռ. Ղազարեան, Գրաբար հոմանիշների բառարան, Երեւան, 2006, էջ 143:

բառը թարգմանուել է որպէս Հասարակ անուն, տեքստում չի ընկալուել որպէս յատուկ անուն, մէկ այլ դէպքում բառը մնացել է չթարգմանուած՝ դառնալով յատուկ անուն:

Ա-1 տեքստի Ելից գրքի ԺԴ 2-ում տրուում է Հանգրուան (յունարէնում սոսկ բայական իմաստով՝ στρατό πεδον - ճամբարատեղի, լատ.՝ Phiahiroth¹⁷), իսկ Թուոց գրքի ԼԳ 7-8 Հատուածում Հանդիպում է Եպիրովո անունը (տողատ.՝ եբր.՝ Ի Մեռա): Որ այս երկուսը նոյն անունն են, Հաստատում է Ա-2 տեքստը (Ելիցում եւ Թուոցում՝ Փիաիրոթ, յուն.՝ Εϊρωθ, ասոր.՝ Խեռիթա): Արեւելահայերէն տեքստի Ելից գրքում յատուկ անունն ոչ մի ընկալում չկայ. «...կայք հաստատեմ Մագդոդի եւ ծովի միջեւ գտնուող հանգրուանում...», իսկ Թուոցում՝ Եպիրոթ: Կարծում ենք՝ Ելից գրքում ուղղակի բաց է թողնուել եբրայերէն տեղանունը՝ Եպիրոթ, որը եղել է Հրէաների ճամբարատեղիւն, Հանգրուանը¹⁸:

Հետաքրքիր իրողութիւններ են զբսելուում Արաբովո անուան գործածութիւններում:

Արաբիա-ն բացատրուում է եզակի իմաստով՝ անապատ, եւ բազում այլ եզակի նշանակութիւններով, մինչդեռ Արաբովո-ը (Αραβωθ) Արաբիա-ի յոգնակի ձեւն է եւ նշանակում է անապատներ կամ դաշտեր: Ինչպէս նշուում է ԲՅԱ-ում, Արաբովո-ը յատուկ անունն չէ. «Սա ոչ է յատուկ անուն միոյ տեղոյ, այլ է հասարակ անուն դաշտային տեղոյ, եւ այսպիսի տեղիք բազումք էին, որք յիշին ի սբ. գիրս»¹⁹: Աստուածաշնչի թարգմանութիւններից արեւմտահայերէնն էլ (Ա-2) տարբեր գրքերում շատ ճիշտ տալիս

17 Վույգատայի Թուոց գրքում (ԼԳ 7) դարձեալ պահպանուում է Phiahiroth, այսինքն, ինչպէս տեսնում ենք, անունը լատիներէն տեքստում այլ տարբերակ կամ տարբերակներ չունի:

18 Անուան աշխարհագրական մեկնութիւնը մանրամասն տե՛ս Энциклопедия Библейская ст. 507:

19 ԲՅԱ, էջ 32:

է այդ անուան՝ իբրեւ Հասարակ անուն թարգմանութիւնը (լատիներէնում տրուում է անուան իմաստը՝ de campestribus Moab), ինչը, կարծում ենք, ճիշտ մօտեցում է, մինչդեռ գրաբար եւ արեւելահայերէն գրքերը պահում են Արաբովո որպէս տեղանուն, որովհետեւ այդպէս է տրուում նաեւ յունարէն տեքստում՝ Եթանասիցում եւ ասորերէնում՝ Պեշիթթայում: Երկ. Օրին. ԼԴ 1-ում Ա-1-ը տալիս է. «Եւ ել Մովսէս յԱրաբովո Մովաբայ ի լեռն Նաբաւ՝ տողատակում նշելով, որ Արաբովո-ը եբրայերէնում նշանակում է ի դաշտացն: Նոյն ձեւով արեւելահայերէն տեքստը՝ Ա-3-ը, պահում է Արաբովո տարբերակը՝ «Մովսէսը Մովաբի երկրի Արաբոթ վայրից բարձրացաւ Նաբաւ լեռը», եւ միայն Ա-2-ն է տալիս թարգմանուած ձեւը, որն էլ ճիշտ Համապատասխանում է եբրայերէն բնագրին. «Եւ Մովսէս Մովաբի դաշտերէն Նաբաւ լեռանը վրայ... ելաւ»: Նոյնն է Երեմիայի մարգարէութեան ԼԹ 5-ում, այսինքն, կարելի է ասել, որ սա օրինաչափութիւն է դառնում բոլոր գործածութիւններում (Ա-1-ը եւ Ա-3-ը չեն թարգմանում, Ա-2-ը թարգմանում է):

Բայց այս նոյն մօտեցումը չի ցուցաբերուել մէկ ուրիշ անուան՝ Գալիլովոյի դէպքում: Նախ ասենք, որ այս անունը չպէտք է շփոթել Աստուածաշնչի տարբեր գրքերում (Յեսու, Գ, Դ Թագաւորաց, Մարկոսի, Ղուկասի եւ Յովհաննէսի աւետարաններ) բաւական շատ Հանդիպող Գալիլեա անուան հետ (Յեսուի գրքի Ի 7-ում՝ Գալիլեա՝ Ա-1, Ա-2, ՄՄԱ, Գալիլիա՝ Ա-3, յունարէնում՝ Γαλιλαια, լատիներէնում՝ Galilea):

Յեսուի գրքի ԺԸ 18-ում գործածուած Գալիլովո անուան իմաստն է սահման²⁰: Ուզում ենք կարեւորել այս իմաստը

20 Գալիլիան ըստ ԲՅԱ-ի (60) ունի մի քանի իմաստ՝ սահման, փոփոխելի, հողովելի, դիրաբաւալ, անի, բայց էականը թերեւս սահմանն է:

(չմոռանանք, որ Գալիլեան Բենիամինի ցեղի եւ Յուդայի ցեղի սահմանն էր. «Հիւսիսից կտրում անցնում են Բերսամիսի աղբիւրը, գնում են Եդոմի գաղիւնի դիմացը գտնուող Գալիլիոս... Բերսամիսի թիկունքից անցնում են հիւսիս եւ իջնում Արաբա»: Այս հաստատումն ունենք Գալիլիոս, որը Գալիլիայի յոգնակի ձեւն է եւ ստուգաբանում է սահմաններ, ուստի, թուում է, ճիշտ կը լինէր, եթէ տրուէր թարգմանուած տարբերակով: Նոյնը՝ Արաբան, որը եւս պէտք է թարգմանուէր անապատ: Որպէս հիմնաւորում օրինակ բերենք Յովէլի գրքի Գ 4-ից. Ա-1-ում՝ «...եւ ամենայն Գալիլեա այլազգեաց...», որը տողատակում բերում է ըստ եբրայականի՝ սահմանք Փղշտացուց: Իսկ Ա-2-ը բուն տեքստում անունը հայացնում է. «...եւ Փղշտացուց բոլոր սահմանները»:

Բայց Յեսուի ԺԸ 18-ում ոչ միայն Ա-1-ը եւ Ա-3-ն են պահել եբրայական բառերն իբրեւ անուանումներ, այլեւ Ա-2-ը. «...զառ ի վերին դիմացը եղող Գալիլիոս կ'ելլէ» (լատիներէնը եւս պահում է եբրայական ձեւը՝ Chasaloth):

Սա կարծել է տալիս, որ մեր հին թարգմանիչները նոյն բառը՝ եզակի եւ յոգնակի գործածութիւններով (Գալիլիա՝ սահման, եւ Գալիլոս)՝ սահմաններ) պահել են հայերէն տարբեր թարգմանութիւններում որպէս յատուկ անուններ՝ դարձեալ համեմատութեամբ Եօթանասնիցի (Գալիլոս) եւ Պեշիթթայի հետ (Գալիլա):

Թարգմանական տարբերակներից շատերը բաղադրեալ անուանումներ են՝ յաճախ բաղադրուած նոյն բառով, ինչպէս՝ Ծննդ. ԺԲ 6-ում՝ Ա-1Վաղնի բարձր, Ա-3 Բարձր կաղնի, Ա-2Մօրէի կաղնի (յուն.՝ δρυς υψηλή՝ դէպի կաղնի՝ բարձր, ասոր.՝ Մամնէի կաղնի), Ծննդ. ԼԵ 8-ում՝ Ա-1Վաղնի Սոյ (յուն.՝ βάλανος πένθος), Ա-2 Ալօնախախտ, Ա-3 Սոյ կաղնի (ասոր.՝ Բըտըմթա դաուխաթա, որ է՝ լացի կաղնի), Դատ. Դ

11-ում՝ Ա-1Վաղնի հաճուցելոց (յուն.՝ δρυς αναπαυομενων), Ա-2 Սամահիմի կաղնի, Ա-3 Հաճուցելուների կաղնի (ասոր.՝ Բըտըմթա դաուխիմի):

Հովիտ-ը դարձել է Հովիտք, Բ Թագ. ԺԸ 18-ում՝ Ա-1 Հովիտ թագաւորաց (յուն.՝ Κοιλας των βασιλεων), Ա-2 թագաւորի հովիտին մէջը, Ա-3 թագաւորների հովիտում²¹ (ասոր.՝ Թագաւորների ձոր), Ա Մնաց. ԺԱ 15, ԺԴ 19-ում՝ Ա-1 Հովիտ սկայից (տողատ.՝ երբ. Ռափայնոց, ասոր.՝ տիտանների հանդում/դաշտում), Ա-2 Ռափայնոց հովիտ, Ա-3 Հսկաների հովիտ, Բ Թագ. Ե 18-ում՝ ի Հովիտս տիտանաց (Κοιλας των τιτανοων), 22-ում՝ Ա-1 ի Հովիտս տիտանացուց, Ա-2 Ռափայնոց հովիտ, Ա-3 Տիտանների հովիտ (ասոր.՝ Թարգմ.՝ տիտանների (հերոսների) ձորում), Բ Մնաց. Ի 26-ում՝ Ա-1 Հովիտ օրհնութեան (Κοιλας ευλογιας), Ա-2 Հովիտ Օրհնութեան, Ա-3 Օրհնութեան հովիտ բաղադրեալ անունների լրացեալ: Ասորերէնում տրուում է Օրհնութեան դաշտ:

Անտառ հասարակ անունը դարձել է բաղադրեալ անունների բաղադրիչ՝ Անտառ ազգաց, Անտառ Եփրեմի, Անտառ լալոնից (Լալոնք), Անտառք:

Արիսօք եբրայական անունը տարբեր իմաստներ էր արտայայտում՝ հողագործութիւն, լուսիւն, խլութիւն, խեցի (ԲՅԱ, 35), իսկ ասորերէնում բառացի նշանակութիւնն է անտառ: Արիսօթը՝ Նեփթաղիմի ցեղին պատկանող քաղաք էր, Յորդանանին մօտ, ուր բնակութիւն էին հաստատել տարբեր ազգերի մարդիկ, եւ այս պատճառով էլ կոչուում էր Արիսօք ազգաց, իսկ Դատաւորաց գրքում՝ Անտառ ազգաց: Ա-1-ի Դատաւորաց Դ 16-ում տրուում է յանտառն ազգաց՝ տողատակում նշելով նոյն Արիսօթք եբրայական ձեւը: Ա-2-ում նոյն հաստատումներում տրուում է միայն ազգաց Արիսօթին տարբերակը, իսկ Ա-3-ը՝ Ազգերի

21 Ծանոց գրքի ԺԴ 17-ում՝ Թագաւորների դաշտ (Ա-3):

Արիսօք եւ Ազգերի անտառք, այսինքն՝ կատարուել է մեխանիկական թարգմանութիւն, ինչի հետեւանքով էլ ընթերցողի համար ստեղծուում է խառնաշփոթ: Յունարէնում տրուում է թարգմանաբար՝ Δρυμος των εθνων (ազգերի կաղնաւտառ), ասորերէնում միայն 16-ում՝ Խարշէթ Ռըամնէ (ազգերի), լատիներէնում՝ Aroseth:

Եփրեմ անունը Սուրբ Գրքում յիշատակուում է ոչ մէկ անգամ. այն ե՛լ անձնանուն է, ե՛լ դառնում է քաղաքի, տարածքի, երկրի անուն: Բ Թագաւորաց գրքում այն դառնում է անտառի անուն՝ Գագայի ցեղին պատկանող, որը Եփրեմի որդու եւ գաղաղագիրների միջեւ մեծ կոտորածից յետոյ անուանուեց Եփրեմի անտառ (Բ Թագ., ԺԴ 6):

Լալետղ/Լալոնք/Լալատեղ (յուն.՝ Κλαυθμων): Լալոնք-ը անեզական բառ է, որ նշանակում է լաց, ողբ: Դատաւորաց գրքի 2-ում հանդիպում է Անտառ լալոնից յատուկ անունը, որը կապուած է այն վայրի հետ, ուր Իսրայէլի որդիները բարձրաձայն լաց եղան ու ողբացին, քանի որ Աստուծո հրեշտակը նրանց մեղադրեց իրենց մեղքերի համար: Տեսնենք՝ անուան ինչ տարբերակներ ունենք հայերէն տեքստերում: Եբրայական Բոքիմ անուան փոխարէն, որ բառացի նշանակում է Լացողք²², ըստ Ա-1-ի՝ ի Լալետղն (1), Լալոնք (5), Ա-2-ում՝ երկու հաստատում էլ Բոքիմ, յունարէնում՝ Κλαυθμων (բառացի՝ լացի), ասորերէնում՝ Բալիմ, Ա-3 Լացատեղ, Լալոնք: Բոքիմ անուան մէջ իմ-ը յոգնակերտ վերջաւորութիւնն է. այնպէս որ, ԲՍԳ-ն(101), կարծում ենք, ճիշտ տալիս է բառի նշանակութիւնը՝ լացողներ: Այս տարածքը մօտ էր Հսկաների Հովտին, ուր տանձենիների ծառեր շատ կային: Այստեղ էլ Դաւիթը կոտորեց այլազգիներին: Անունը հան-

22 Տե՛ս Բառարան Սուրբ Գրոց հանդերձ պատկերօք, աշխարհացոցք եւ տախտակօք (այսուհետեւ՝ ԲՍԳ), Կոտաւանդապոլիս, 1881:

դիպում է նաեւ Թագաւորաց գրքում: Բ Թագ. Ե 23-24 հաստատում եւս տրուում է այս անունը: Ըստ Ա-1-ի՝ ի Լալոնք, անտառին Լալոնք, բայց տողատակում տալով ոչ թէ տանձենի, այլ թթենի՝ ըստ եբրայականի: Ա-2-ը երկու դէպքում էլ չի տուել յատուկ անուն, այլ միայն՝ թթենիներուն կողմէն՝ լուսանցքում նշելով՝ կամ տանձենիների: Ա-3-ում կարդում ենք՝ Լացի անտառ: Յունարէնում տրուում է αλσος κλαυθμωνος Լացի պուրակ (նկատի ունի տանձենու), ասորերէնում՝ տանձենիների: Ասենք, որ Ա Մնացորդաց գրքի ԺԴ 14-15-ում տրուում է միայն տանձենիներ ձեւը. Ա-1, Ա-3-ում՝ ի տանձիսն, Ա-2-ում՝ թթենիներ:

Բաւական շատ են գործածուած ձոր բաղադրիչով յատուկ անունները, ինչպէս՝ Օալէի ձոր, Ջարեթի ձոր, գրաբարեան ձեւերում ձոր սկզբնաբաղադրիչը գրուում է փոքրատառով, ինչպէս՝ ձոր Առնովնայ, ձոր Ենովնայ, ձոր Ելովնայ, ձոր Աքովնայ եւ այլն, սակայն մեզ այս պարագայում հետաքրքրում են ձոր-ով բաղադրուած այն յատուկ անունները, որոնք ինչ-որ չափով շեղուել են եբրայական ձեւերից կամ ներկայացնում են դրանց թարգմանական տարբերակները: Դրանք են՝ Բեւեկնի ձոր, Ջոր դատատանի, Ջոր ողկոյզի. Ջոր աղի, Ջոր աղտից, Ջոր կոտորածի/Ջոր կոտորելոց, Ջոր, Ջոր մահուան շուքի եւ այլն, ընդ որում՝ մեծատառ թէ փոքրատառ գրութեան ոչ մի սկզբունք չի գործում:

Բեւեկնի ձոր՝ Էլիսաուս (յուն.՝ Φαραν, լատ.՝ Pharan, գերմ.՝ El-Paran): Ծննդոց գրքի ԺԴ գլխի 6-րդ հաստատումն տրուում է Բեւեկնի ձոր յատուկ անունը, որը քաղաքի անունն է. «Եւ գճողացիսն, որ ի լեռնա Սէրայ միջեւ ԳԲեւեկնի ձորոյն (եբր.՝ Եդփաուան), (Ա-1): Արեւմտահայերէնում պահուում է եբրայական ձեւը. «...միջեւ անապատին քովը եղող Էլիսաուսը գարկին» (Ա-2), արեւելահայերէնում տրուում է դարձեալ թարգմանուած տարբերակը. «Եւ հասան միջեւ անապատում գտնուող Բեւեկնի ձորը»

(Ա-3): Անշուշտ, երբայերէնի Եղիսաւան- ում դի գրութիւնը գրիչները արտագրու- թեան սխալ է. պէտք է լինէր Եղիսաւան՝ մի ձեւ, որը հիմնաւորուած է տարբեր թարգ- մանութիւններով: Այստեղ, ըստ Հին Կտա- կարանի, Դաւիթը սպանեց Գողիթիին: Թէեւ ԲՅԱ-ն Փառան բառը տարբեր կերպ է մեկնում՝ գեղեցկութիւն, գովութիւն, պան- ծանք, նաեւ՝ անապատ (էջ 220), սակայն յունարէնում ֆարաչէ բառը բացատրուած է ձոր: Այսինքն՝ հայերէն թարգմանութեան մէջ ձոր-ով բաղադրուած յատուկ անուն- ները աղբրուում են Եօթանասնիցին, որը տալիս է ֆարաչէ, եւ որն արդէն հայերէն տեքստերում՝ Ա-1, Ա-3, տրուել է թարգ- մանաբար: Ծննդոց գրքում հանդիպում է նաեւ Փառան կադէս, որը յետագայում բա- ժանուեց տարբեր քաղաքների՝ անուա- նուելով՝ Փարան եւ Կադէս: ԲՅԱ-ն Փառան անուան տակ տալիս է նաեւ սա՝ բացատ- րելով. «Բաղաքս այս է Աոյն, որ կոչի բեւեկնի ձորոյն... եւ սաի՝ թէ էր արքայանիստ քաղաք երանելոյն Յորայ» (էջ 220):

Անշուշտ Բեւեկնի ձոր-ը մեր թարգմա- նիչները ընտրութիւնն է, քանի որ յունա- րէնը եւ ասորերէնը տալիս են չթարգմա- նուած՝ Փարան, Փառան տարբերակը:

ԲՍԳ-ն Էլան բացատրում է կադնի (էջ 208): Ուրեմն ինչո՞ւ է այն հայերէն տեքս- տերում դարձել բեւեկնի ձոր: Արեւմտահա- յերէն տեքստի Էղիսաւանը լուսանցքում տրուած է Փառանին բեւեկնի տարբերա- կով: Վերելում տեսանք, որ նման շփոթու- թիւն էլի է հանդիպում՝ տանձենի/թթենի, այս դէպքում՝ կադնի/բեւեկնի:

Ողկուզի ձոր-ը՝ որպէս յատուկ անուն, հանդիպում է Թուոց գրքում. «Եւ անուանե- ցին զանուն տեղոյն՝ Ձոր ողկուզոյ, վասն ող- կուզին, զոր հատին անտի որդիքն Իսրայէլի» (Թուոց, ԺԳ 25), նոյնը նաեւ՝ ԼԲ 9-ում՝ «Ք Ձորն ողկուզի», Ա-2-ում համապատասխա- նաբար կիրառուած են Եսքողի ձոր (լու- սանցքում՝ ողկուզի), իսկ Ա-3-ում՝ Ողկուզի

ձոր: Յունարէն տեքստում՝ Φαραχ βου- ρουος, ասորերէնում՝ Սղուլա, լատիներէ- նում՝ Neelescol:

Յովէլի գրքում (Գ 14) հանդիպում է Դատաստանի ձոր տեղանունը: Գրաբար տեքստը տալիս է. «Ձայնք հնչեցին ի Ձորն դատաստանի»՝ տողատակում նշելով երբա- յական համարժէքը, որը գրեթէ չի կար- դացուում, բայց ենթադրելի է, որ պիտի լի- նի Յովսափատ, Ա-2-ում՝ Վճոյն հովիտին մէջ, Ա-3-ը եւս՝ Դատաստանի ձոր: Դատաս- տան եւ Վճոյն տարբերակներից ո՞րն է աւելի ճշգրիտ տալիս երբայական համարժէքը: Այս տեղանունը ունի մէկանգամեայ կի- րառութիւն, բայց ունի շատ կարեւոր դե- րակատարում. նախ՝ Յովսափատ անունը ստուգաբանում է որպէս Տէրը դատար է, որտեղից էլ գալիս է Դատաստանի ձոր-ը: Լատիներէն տեքստում տրուում է valle concisionis: Բաց է մնում Վճոյն ձոր կամ հո- վիտ անուանումը, որն էլ աղբրուում է աս- տորերէն Պեշիթթային՝ Վճոյններ:

Ենթադրուում է, որ Ծննդոցում (ԺԳ 17) եւ Թագաւորութիւնների գրքում (Դ Թագ., Ի 18) յիշատակուող Թագաւորների հովիտը այս նոյն տարածքի անուանումն է, որտեղ թաղուել է Յովսափատ թագաւո- րը, եւ ոչ միայն նա: Յովէլի գրքում տրուած տողերից շատերը նաեւ ենթա- դրում են, որ Դատաստանի ձորը դառնա- լու է Տիրոջ ահեղ դատաստանի վայրը բո- լոր մեղաւոր մարդկանց նկատմամբ, եւ ի- զուր չէ, որ ԲՍԳ-ն այս անուանումը հա- մարում է այլաբանական: Յունարէն Եօ- թանասնիցում այս հատուածը չի համընկ- նում հայերէն բնագրի հետ:

Ձոր կոտորելոց կամ Ձոր կոտորածի ա- նուանումները գտնում ենք Երեմիայի գրքում. ըստ Ա-1-ի՝ «...եւ Ձոր որդոցն Ենով- մայ, այլ Ձոր կոտորելոց» (Երեմ. էջ 32), «այլ Ձոր կոտորածի» (ԺԹ 6), Ա-2-ում՝ Սպանու- թեան ձոր, Ա-3-ում՝ Սպանուածների ձոր, Կո- տորածի ձոր: Յունարէնում տրուում է Փա-

րաչէ α νηρημενον, որը համապատաս- խանում է Սպանուածների ձոր տարբերակին:

Ենովմի որդիների ձոր կամ Ենովմացիան- րի/Գլորիան ձոր անուանումը Տիրոջ կամ- քով փոխուում եւ դառնում է Կոտորածի ձոր/ձոր կոտորելոց կամ Սպանութեան/Սպա- նուածների ձոր:

Յովէլի գրքում (Գ 19) գտնում ենք եւս մի տեղանուն՝ Ձոր Վիճակաց, որը գրա- բար տեքստում գձորն վիճակաց է (տողատ.՝ եբբ.՝ Սատտիմ), արեւմտահայերէն տեքս- տում՝ Սատտիմի ձորը, արեւելահայերէն տեքստում՝ շրջակայքի ձոր, ասորերէնում՝ Սատիմ: Թուոց եւ Յեսուի գրքերում տրուում է երբայական Սատիմ տարբերակը՝ յունարէն տառադարձութեամբ:

Ի դէպ, Ձաքարիայի մարգարէութեան մէջ վիճակ բառը դարձել է յատուկ անուն Տիրոջ երկու գաւազաններից մէկի համար. «...երկու գաւազան պիտի վերցնես, մէկը պիտի կոչես՝ Գեղեցկութիւն (Καλλος), իսկ երկրորդը՝ Վիճակ (Σχοινιον) կապ, պարան...» (Ա-3, Ձաք., ԺԱ 7): Արեւմտահայերէն տեքստում Վիճակի փոխարէն տրուած է Կապեր, ինչը հաստատուում է ասորերէն տեքստում, ուր համապատասխանաբար տրուում են Գեղեց- կութիւն կամ Հաճոյք եւ Պարան:

Ծննդոց գրքում գործածուած է Ձոր ա- ղի (Փարաչէ αλκυην). Ա-1-ում՝ «գումարե- ցան ի ձորէ աղի, որ է ծով աղտից» (տողատ.՝ եբբ. Սիդիդի), Ա-2-ում՝ միայն՝ «հաւաքուեցին ձորին մէջ, որ է Աղի ծովը», Ա-3-ում՝ «հաւա- քուեցին Աղի ձորում, որ Աղի ծովն է» (ԺԳ 3): Ինչպէ՞ս հասկանալ այս խառնափնթորու- թիւնը: Բ Մնացորդաց գրքում տրուում է Ա- ղի հովիտ. Ա-1-ում՝ ի Հովիտս աղտիցն, Ա-2- ում՝ Աղի ձորը, Ա-3-ում՝ Աղի հովիտ: Ինչպէս նկատում ենք բազմաթիւ օրինակներից, հո- վիտ եւ ձոր բառերը հոմանիշ նշանակու- թիւններ ունեն:

Բ Մնացորդաց եւ Նէեմիի գրքերում հանդիպում են Անկեան Դուռ, Ձորի դուռ յա- տուկ անունները, որոնք անշուշտ թարգ-

մանական համարժէքներ են երբայական ձեւերի եւ հայերէն տեքստերում հետե- ւեալ կերպ են ներկայանում. Ա-1-ում՝ առ Դրան ձորոյն եւ առ անկիւնսն (Բ Մնաց., ԻԶ 9), առ դրան Ձորոյն (տողատ.՝ Սանաբաղատ, Նէեմ. Բ 15), Ա-2-ում՝ համապատասխանա- բար Անկեան դրանը, Ձորին դրանը, Ա-3-ում՝ Ձորի դուռ, Անկեան դուռ: Այս անուանումնե- րը համեմատ են յունարէնին՝ քսլղ տից ֆարաչոց (ձորի դուռ), քսլղ των γωνιων (անկիւնների դուռ):

Մեր կարծիքով՝ յատուկ անունների թարգմանական տարբերակների առկայու- թիւնը Աստուածաշնչի հայերէն տարբեր գրքերում՝ գրաբար, արեւմտահայերէն, ար- ւելահայերէն, ըստ էութեան, հիմնաւոր- ւում է այն պարզ ճշմարտութիւնը, որ հա- յերէն Աստուածաշունչ գիրքը հնարից մէկն է, որտեղ յատուկ անունների թարգ- մանութիւններում տարբեր մօտեցումներ ենք նկատում: Գրաբար եւ արեւելահայե- րէն տեքստերը ձգտել են թարգմանել յա- տուկ անունները, յատկապէս՝ տեղանուն- ները: Երբեմն դա տեղին է, արդարա- ցուած, երբեմն երբայական յատուկ անու- նը ներկայացուել է դարձեալ որպէս յա- տուկ անուն, բայց կա՛մ տեքստից բխող, ինչպէս՝ Ողկուզի ձոր, կա՛մ բառացի նշա- նակութեամբ թարգմանուած, ինչպէս՝ Լա- լոմից անտառ: Երբեմն էլ յատուկ անունն իսպառ վերացուել է՝ խաթարելով տեքստի բովանդակութիւնը: Արեւմտահայերէն տեքստը չի թարգմանում (կամ գրեթէ չի թարգմանում) յատուկ անունները, իսկ ե- թէ թարգմանում էլ է, ուրեմն այն իրօք հասարակ անուն է, կամ պէտք է որ թարգ- մանուի:

Այս ամենն իհարկէ հաստատում է այն ճշմարտութիւնը, որ հայերէն թարգ- մանութիւնը կատարուել է բաւականին երկար ժամանակում, տարբեր թարգմա- նիչների կողմից եւ ամենակարեւորը՝ տար- բեր բնագրերից:

The Translation Versions of the Special Names in the Bible Books

Parandzem Meytikhanyan

Summary

In the study of special names, that are found in the Bible, the Armenian translated versions of Hebrew names, which are too many, present special interest.

The special names, especially the names of the places, were often translated in the texts written in grabar, i.e. old Armenian and East Armenian language. This attitude was sometimes a justified action, but sometimes the Hebrew special name was again presented as another special name though this time it was derived from its meaning, which it got in the text, like, Voghkoyz clough or by its literal meaning, like, Lalonitz forest: sometimes the special name was ultimately eliminated, thus, undermining the plot of the text.

In the texts written in grabar, i.e. old Armenian and East Armenian language we come across different translations of the same Hebrew special name, e.g., Meripa – Gossip and Charge.

In the texts written in West Armenian language the special names are not translated

at all (or almost at all) or if they are translated, then they appear as real common name or it must be translated in this way, like, Arabovt-from the fields, Yovsapati-valley-Valley of Judgment.

It has been very important for us to reveal whether the translation of the special name carried out by Armenian translators was done from Greek or Assyrian texts, or was it done by the choice of our translators, and what was the cause of such choice? Sometimes the comparison is done with the Latin and German texts in order to adjust the attitude of our translators.

Our study brings to the conclusion, that the Armenian translation has been carried out for rather long time and by different translators and, which is more important, it was done from Greek and Assyrian various original texts. The translated versions of the names are often equivalents of the Greek ones.

ՑԵՂԻ ԳԱՂԱՓԱՐԻՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆ ԳՆԵՐՈՒ ՄԷՋ ԵՒ ՀԱՅԵՐԸ (ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ)

Վարդան Սատրեոսեան

Թէն կը թուի թէ այնքան մեծ տարբերութիւն կայ լայնօրէն անըստուած ազգերու միջեւ, որ դիրտութեամբ կարելի պիտի ըլլար Բարեյուսոյ Հրուանդանի բնակիչները, կրիմլանտացիներն ու չէրքէզները շփոթել մարդու բազմաթիւ տեսակներու հետ, սակայն երբ հարցը հիմնաւոր կերպով կը գնահատուի, կը տեսնուի, որ բոլորը կը միախառնուին իրարու հետ եւ որ մարդկութեան մէկ տեսակը այնքան զգալիօրէն կ'անցնի միւսին մէջ որ կարելի չէ սահմանները ճշդել անոնց միջեւ:

Եռհանգ Ծրիտրիխ Պլումենպախ (1795)¹

Աւելի քան երկու դար առաջ, արդի մարդաբանութեան հիմնադիր Եռհանգ Պլումենպախը արդէն նկատած էր, որ իւրաքանչիւր «մարդկութեան տեսակ»ի սահմանները կարելի չէր խստօրէն գծել. երեք «լայնօրէն անջատուած ազգեր», որոնք կը ներկայացնէին սեւամորթները (Բարեյուսոյ Հրուանդանի բնակիչներ), դեղնամորթները (կրիմլանտացիներ) եւ սպիտակամորթները (չէրքէզներ), «բոլորը կը միախառնուին իրարու հետ», կ'ըսէր ան, եւ «մէկ տեսակը ... զգալիօրէն կ'անցնի միւսին մէջ»: Երբ կենսաբանութիւնը «ցեղ»ի արհեստածին գաղափարը եւ վերոյիշեալ սահմանները որոշադրելու իր անկարողութիւնը ցոյց կու տար, ցեղային մտածողները օգնութեան կը դիմէին գիտական այլ ճիւղերու՝ Հոգեբանութեան, ընկերաբանութեան եւ մարդաբանութեան:

Ցեղային մտածողութեան անհաշիւ փորձերը՝ գիտական դեգերումներով իր դրոյթները հաստատելու եւ, ներյայտօրէն, Պլումենպախի սխալած ըլլալը ապացուցելու համար, ինքնին կը կազմեն առանձին պատմութիւն մը:

Ցեղային խնդիրը անփոփոխ բնոյթ ունեցած է, իսկ միեւնոյն ժամանակ՝ փոփոխական յատկանիշներ: Անուններն ու պարագաները կը փոխուէին ժամանակի ընթացքին, բայց բանալի հարցերը անփոփոխ կը մնային: Աստուածային հրովարտակները կը փոխարինուէին, այսպէս կոչուած, բնական օրէնքներով, ցեղերու նուիրապետութիւնը մանրամասն տեսաբանական վերլուծումներու կ'ենթարկուէր, իսկ անհաւասարութեան հաւատամքը կը քարոզուէր բազմապիսի հիմքերով՝ տիրակալութեան եւ ենթակայութեան նախասահմանուած շարունակականութիւնը ապահովելու նպատակով: Ցեղային տարբեր գունաւորումներու շեշտադրութեան անհրաժեշտութիւնը, աշխարհի երկայնքին պատճառած տառապանքին ու բաժանումներուն գուգահեռ, անդադար ենթարկուած է կերպարանափոխումներու՝ ըստ ժամանակի պահանջներուն:

Ցեղային ալիքը սկսած էր երեք բանալի եզրոյթներով, որոնք իրերայաջորդ կերպով ստեղծուած էին երեք տասնամակներու ընթացքին: 1795-1819 շրջանին, ժամանակագրական կարգով, երեւան կու գային «կովկասեան» բառը՝ բաց գոյն մորթով «սպիտակ ցեղ»ի անուանումը, «հնդեւրոպական» բառը՝ Ճիպրայթարէն մինչեւ Հնդկաստան խօսուած կենդանի ու մեռեալ լեզուներուն «մայր լեզու»ին ա-

1 The Anthropological Treatises of Blumenbach and Hunter, translated by Thomas Bendyshe, London, 1865, pp. 98-99.